ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«02» 09 2024թ.

N 0432

Հասցե ՀՀ, ք. Վանաձոր,
Գարեգին Նժդեհի 2/42
Հեռ. (0322) 2-02-86
Էլ. Փոստ: vanmedcenter@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

<Աննարկա> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/69

Համաձայն ՀՀ Պետական վերահսկողական ծառայության 06.08.2024 թ. թիվ Ե/1828-24 գրության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2024 թվականի հուլիսի 12-ին «Աննարկա» ՍՊ ընկերության հետ կնքել է ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/69-2 ծածկագրով բժշկական պարագաների մատակարարման պայմանագիր:

Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ն՝ ղեկավարվելով Պայմանագրի 8.3 կետի պահանջով, ինչպես նաև վերը նշված իրավական հիմքերով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է պայմանագիրը: Ընդ որում, Կենտրոնը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում՝ սույն թվականի օգոստոսի 27-ին :

Ղեկավարվելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով և 2-րդ մասով, այն է լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, **որոշում եմ՝**

1. < Աննարկա> ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի ժամ՝ Մ.Հազրդյան

Կատարող՝ Ա.Պողոսյան
Հեռ.099-57-00-55